21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013 ՇԱԲԱԹ 224(5306)

Ազգ Azg

ISSN: 1829-1651

# Վերսկսված բանակցությունները փորձում են ինստենսիվացնել` ամերիկյան նախաձեռնությունների հեռանկարով

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Սահմանին տեղի ունեցած վերջին խախտումները վնասում են խաղաղության հեռանկարները: Այս մասին դեկտեմբերի 19-ի ուշ երեկոյան տարածված մամուլի հաղորդագրությամբ ընդգծում են արել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները տարածաշրջանային այցի ավարտին:

ԵԱՀԿ պաշտոնական կայքէջում տեղադրված մամուլի հաղորդագրության համաձայն, Մինսկի խմբի համանախագահներ Ժակ Ֆորը, Իգոր Պոպովն ու Ջեյմս Ուորլիքը ամփոփել են ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ տարածաշրջան այցելությունը դեկտեմբերի 15-19: Ըստ այդմ, դեկտեմբերի 15-ին համանախագահներն ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը Բաքվում էին, 16-ին` Երեւանում, 17-ին էլ հանդիպել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների հետ:

Հաղորդագրությունը թվագրված է դեկտեմբերի 19-ով` տարածման վայր նշելով Երեւանը: Թե դեկտեմբերի 18-19-ին համանախագահներն ինչ են արել եւ որտեղ` չի մանրամասնվում:

Ամեն պարագայում, հաղորդագրությունը հիշեցնում է նոյեմբերի 19-ին Վիեննայում տեղի ունեցած Հայաստան-Ադրբեջան նախագահների մակարդակով հանդիպումը, որին հաջորդեց արտգործնախարարների մասնակցությամբ քննարկումը արդեն դեկտեմբերի 4-5-ին Կիեւում: Ըստ այդմ, վճռականություն է հայտնվել շարունակելու բանակցությունները 2014-ի հունվարին: Նախագահների հաջորդ հանդիպումը նախապատրաստելու նպատակով իրականացվելիք արտգործնախարարների հանդիպումից հետո էլ համանախագահները կլինեն Շվեյցարիայում` ԵԱՀԿ-ում նախագահող երկրի հետ խորհրդակցությունների նպատակով:

Համանախագահները ընդգծել են, որ սահմանին խախտումները վնասում են խաղաղ գործընթացի հեռանկարները: Նրանք կոչ են արել կողմերին «ձեռնպահ մնալ այնպիսի քայլերից, որոնք կարող են մեծացնել լարվածությունը, եւ աշխատել պահպանել այնպիսի մթնոլորտ, որը կնպաստի բանակցային սեղանի շուրջն առաջընթաց գրանցելուն»:

Տես էջ 2

# Գազային համաձայնագրերը` բուռն քննարկումների առարկա

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




«Մենք գիտենք մենք ով ենք, չգիտենք` դուք ով եք», դիմեց ՀՀԿ-ական **Վարդան Այվազյանը** ժառանգական **Զարուհի Փոստանջյանին**, ժամը 19 անց 16-ին, Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարությունների միջեւ ստորագրված գազային համաձայնագրերի քննարկման ժամանակ, նյարդայնացած պատասխանելով «Ժառանգություն» խմբակցության ղեկավարի գնահատականներին: Դա տեղի էր ունենում հատուկ այդ համաձայնագրերը քվեարկությամբ վավերացնելու նպատակով հրավիրված Ազգային ժողովի արտահերթ նիստի ժամանակ, երեկ:

Առհասարակ` եթե գազի համաձայնագրերի նախապատմությունից անտեղյակ մեկը լսեր Ազգային ժողովի երեկվա արտահերթ նիստի քննարկումները Հայաստանի եւ Ռուսաստանի միջպետական գազային համաձայնագրերը վավերացնելու վերաբերյալ, կընկներ շփոթմունքի մեջ, քանի որ կենաց ու մահու քննարկում տանող ընդդիմությունն ու իշխանությունը փաստարկներ էին բերում վերջին մարտին գնացողի նման` մաքսիմալ որակումներով եւ բնորոշումներով, անգամ բացահայտ վիրավորանքներով երբեմն: Մեծամասնությունը եւ «Հայռուսգազարդ» ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի եւ հետագա գործունեության պայմանների մասին Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարությունների միջեւ կնքված համաձայնագիրը ներկայացնող էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար **Արմեն Մովսիսյանը** գազային համաձայնագիրը համարում էին Հայաստանի եւ հայ սպառողի համար շահավետ ու հաջողված, որի արդյունքում սպառողը էժան գազ է ստանալու, կուտակված 300 մլն դոլարի գազային պարտքի կես 155 մլն դոլարի փակումն էլ «Հայռուսգազարդի»` Հայաստանի կառավարության քսան տոկոս բաժնեմասով` ամենահարմար տարբերակը:

Տես էջ 8

# Խոդորկովսկին ազատ է արձակվել

Դեկտեմբերի 20-ին, ժամը 12-ն անց 20 րոպեին Կարելիայի Սեգեժա քաղաքում գտնվող գաղութի տարածքից դուրս է եկել «Յուկոս» ընկերության նախկին ղեկավար Միխայիլ Խոդորկովսկին: Այդ մասին «Ինտերֆաքս» գործակալության թղթակցին հայտնել են Կարելիայի ուժային կառույցներում:

Նույն օրը առավոտյան ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրել էր «Յուկոսի» նախկին ղեկավարին ներում շնորհելու հրամանագիր: Փաստաթուղթն ուժի մեջ էր մտել ստորագրման պահից:

«Ղեկավարվելով մարդասիրության սկզբունքներով` որոշում եմ ներում շնորհել 1963 թ. Մոսկվա քաղաքում ծնված Միխայիլ Բորիսովիչ Խոդորկովսկուն` նրան ազատելով պատժի հետագա ժամկետից», ասվում է հրամանագրում:

Դեկտեմբերի 19-ին Պուտինը հայտարարել էր, որ Խոդորկովսկին դիմել է ներման խնդրագրով, որը կբավարարվի:

Նախկին օլիգարխ Միխայիլ Խոդորկովսկին ձերբակալվել էր 2003 թվականին: 2005-ի մայիսին դատարանը նրան 9 տարվա ազատազրկման էր դատապարտել խարդախության եւ հարկ չվճարելու մեղադրանքներով: Հետագայում պատժաժամկետն իջեցվել էր 8 տարվա: 2010-ի դեկտեմբերին երկրորդ գործի շրջանակներում «Յուկոսի» նախկին ղեկավարին 14 տարվա ազատազրկման էին դատապարտել նավթի հափշտակման եւ դրա վաճառքի հասույթի օրինականացման համար: Մեկուկես տարի անց ժամկետն իջեցվել էր 13 տարվա, կես տարի անց` եւս 2 ամսով: Ամենավերջին դատավճռի համաձայն, Խոդորկովսկին պետք է ազատ արձակվեր 2014-ի օգոստոսին:

# Ձվի դեֆիցիտ եւ գնաճ չեն լինի

*Հավաստիացնում են գյուղատնտեսության նախարարության պաշտոնյաները*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գյուղատնտեսության փոխնախարար **Գրիշա Բաղիյանը** եւ անասնաբուժության եւ անասնաբուժության վարչության պետ **Աշոտ Հովհաննիսյանը** երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ, անդրադառնալով հավի ձվի շուկայում ստեղծված իրավիճակին, հավաստիացրին, որ նախատոնական օրերին այդ ապրանքատեսակի դեֆիցիտ չի լինի:

Առավել մանրամասնելով ձվի շուկայի իրավիճակը, Աշոտ Հովհաննիսյանը նշեց, որ Հայաստանի պահանջարկը` օրական 800-900 հազար ձու, տեղական արտադրողները բավարարում են: Հոկտեմբերին ներմուծվել են վառեկներ, որոնք դեկտեմբերին արդեն սկսել են ձվադրել, եւ կունենանք օրական 100-150 հազար լրացուցիչ ձու, ինչն ամբողջությամբ կբավարարի նախատոնական ավելացած պահանջարկը: Գյուղնախարարության վարչության պետը նաեւ համոզմունք հայտնեց, որ ձվի գնի բարձրացում նույնպես չի լինի եւ անգամ ամռանը հնարավոր է որոշ գնանկում:

Խոսելով մսամթերքի մասին` Աշոտ Հովհաննիսյանն ասաց, որ այս տարվա երկրորդ կեսից նկատված գնանկումը պայմանավորված է անասնագլխաքանակի ավելացմամբ: Տավարի մսի գինը նախկին 2600 դրամի փոխարեն այժմ կազմում է 2400-2500 դրամ: Նրա ներկայացմամբ` տավարի մսի գինը նվազել է 7-8 տոկոսով, իսկ խոզի եւ ոչխարի մսի գները` 20-30 տոկոսով:

Տես էջ 2

# ԱԱԳ-ին հանձնարարեցին սահմանափակել աշխարհի ղեկավարների լրտեսումը

ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) գործունեության քննությամբ զբաղվող փորձագետների հանձնաժողովը Սպիտակ տանը հանձնարարել է սահմանել աշխարհի ղեկավարների լրտեսման հստակ չափանիշներ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:



Նախագահ Բարաք Օբամային ներկայացրած զեկուցագրում հանձնաժողովը մասնավորապես հանձնարարել է մտցնել ԱԱԳ-ի կողմից հեռախոսազրույցների զանգվածային գաղտնալսման սահմանափակումներ: Փոխարենը, ըստ փորձագետների, ԱԱԳ-ն պարտավոր է առանձին որոշումներ ընդունել յուրաքանչյուր կոնկրետ դեպքի առթիվ: ԱԱԳ-ին հանձնարարվում է որոշում ընդունելուց առաջ պարզել, թե գաղտնալսումը թույլ կտա՞ արդյոք տեղեկանալ ԱՄՆ-ի անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, հիմքեր կա՞ն կարծելու, թե ինչ-որ տեղեկություն թաքցվում է ԱՄՆ-ի իշխանություններից եւ գոյություն ունե՞ն արդյոք այդ տեղեկությունները ստանալու ուրիշ եղանակներ: Բացի դրանից, ԱԱԳ-ին խորհուրդ են տալիս գնահատել գաղտնալսման հնարավոր բացասական հետեւանքները, եթե այդ մասին հայտնի դառնա հանրությանը:

Հանձնաժողովը նաեւ խորհուրդ է տվել հեռախոսները գաղտնալսելիս օգտվել հեռահաղորդակցական ընկերությունների կամ ԱԱԳ պատվերները կատարող մյուս ձեռնարկությունների ծառայություններից:

Փորձագետները հանձնարարում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար ստանալ ԱՄՆ Օտարերկրյա հետախուզությունների վերահսկման գործելու դատարանի հատուկ թույլտվությունը:

ԱԱԳ գործունեությունը քննում է նախագահ Օբամայի հանձնարարությամբ ստեղծված հատուկ հանձնաժողովը: Վերջերս շատ է խոսվում ԱԱԳ-ում սպասվող բարեփոխումների մասին:

Համացանցից եւ հեռախոսից օգտվողների նկատմամբ ամերիկյան հատուկ ծառայությունների լայնածավալ լրտեսման մասին հայտնի էր դարձել 2013-ի ամռանը` ԱԱԳ եւ ԿՀՎ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենի հրապարակած գաղտնի տեղեկությունների շնորհիվ: Մասնավորապես պարզվել էր, որ Վաշինգտոնը գաղտնալսել է աշխարհի 35 ղեկավարների (այդ թվում` Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի) հեռախոսները:

Պ. Ք.

# Ընթացիկ

Կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանն** ամփոփեց 2013 թվականը:

Նախարարի հավաստմամբ՝ 2013-ով ավարտվում է հնգամյա ժամանակային տարիների շարքը, իսկ գալիք տարին կարող ենք համարել վերականգնման տարի:

Մինչ լրագրողների հարցերը Աշոտյանը առանձնացրեց տարվա ձեռքբերումները: Հանրակրթության ոլորտի բարեփոխումները սաների սոցիալական պաշտպանության նոր ծրագիրը, որի շնորհիվ նրանք կստանան աջակցություն պետության կողմից՝ անկախ սոցիալական վիճակից՝ հաշվի առնելով նրանց առաջադիմությունը: Այս տարի միջազգայնացման շրջանակներում տարված աշխատանքները նույնպես հասկանալի էին, ինչպես նաեւ կարեւոր էր բուհական ենթակառուցվածքների արդիականացումը: Ձեռքբերումփուլն ավարտելու ուղղությամբ. հաջողությամբ ավարտվել են «Արեալ» արագացուցչի հիմնական համակարգերի փորձարկում ները:

Նախարարը շրջանցեց կոռուպցիայի դեմ պայքարի համար տարված ԿԳՆ-ի աշխատանքները՝ նշելով, որ կոռուպցիայի դեմ պայքարը հավերժական է, եւ այնպես չէ, որ նման պատասխան է տալիս՝ հարցից խուսափելու համար:

## Ա. Աշոտյան. «Ոչ մի կրթական ծրագիր այս տարի չի ձախողվել»



հետեւյալներն են՝ հանրապետության դպրոցների 2-րդ դասարանից սկսած, ուսումնական պլանով ներդրվեց «Շախմատ» առարկան, որի դասավանդումն ավարտվում է 4-րդ դասարանում: Տպագրվել եւ հանրապետության բոլոր դպրոցներին են տրվել Հայաստանի Շախմատի ակադեմիայի հրատարակած «Շախմատ» առարկայի 4-րդ դասարանի դասագիրքն ու խնդրագիրքը: 2013 թվականի հունվարից հանրապետության բոլոր 1441 դպրոցներն ընդգրկվել են Հայաստանի համադպրոցական ինտերնետային ցանցում: Նոր՝ բեռնաթափված, ուսումնական ծրագրերով հանրապետության 96 դպրոցներում իրականացվել է հիմնական դպրոցի 20 անուն դասագրքերի փորձարկում, որից հետո դրանք լրամշակվել են, հրատարակվել եւ առաքվել են դպրոցներ: Ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկն ընդլայնվել է 18 դպրոցով: Ներկայումս հանրապետությունում գործում է ներառական կրթություն իրականացնող 117 հանրակրթական դպրոց:

2013-ին ՀՀ բուհեր են ընդունվել 1200 օտարերկրացի ուսանողներ, որոնցից շուրջ 700-ը սփյուռքահայեր են, իսկ 500-ը՝ օտարերկրացիներ:

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու նպատակով նախարարության կողմից 2013-2014 ուսումնական տարում օտարերկրյա պետություններ են գործուղվել շուրջ 160 ուսանողներ: Նրանք իրենց ուսումը շարունակում են Վրաստանում, Ռուսաստանում, Լեհաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Չինաստանում, Հորդանանում, Սլովակիայում, Իրանում եւ այլ երկրներում»,-ասաց նախարարը:

Այսօր Հայաստանի 42 դպրոցում ուսուցումն իրականացվում է ռուսերենով, 60 դպրոցում խորացված ուսուցում է:

Ըստ Աշոտյանի՝ այս տարվա կարեւոր ձեռքբերումներից է ուների շարքում նշեց նաեւ ԵԽ-ի կողմից Հայաստանում կազմակերպված տարածաշրջանային նախարարական համաժողովը եւ ՀՀ բուհերի՝ աննախադեպ քանակությամբ (շուրջ 18), եվրոպական ծրագրերին մասնակցելն ու շահելը:

Նախարարը տեղեկացրեց, որ այս տարվա ընթացքում կասեցվել է 4 բուհերի եւ 6 նախակրթարանների լիցենզիա:

«Այս տարի ունեցանք նաեւ 100 լավագույն գիտնականների ցանկը, որոնք ամսական 135 000 դրամ հավելավճար կստանան: Հավաստիացնում եմ, որ ոչ մի պետական ծրագիր կրթության ոլորտում չի ձախողվել, չնայած, մյուս կողմից, իրականացված աշխատանքների տեմպը միշտ չէ, որ բավարար է եղել»,- ասաց Աշոտյանը:

Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի եւ սարքավորումների ձեռքբերման մրցույթում հաղթել է 5 կազմակերպություն, տրամադրվել է 305 մլն 570 հազ. դրամ: Ավելացել են գիտական թեմաների ֆինանսավորման մրցույթների ծավալները, այդ թվում՝ թեմաներում ներգրավված գիտաշխատողների միջին աշխատավարձը ավելացել է՝ 65000-ից մինչեւ 100.000 դրամ:

Աշխատանքներ են տարվել «Քենդլ» նախագծի առաջին

Ի դեպ, 2013 թվականին մեկնարկել է «Պետության կողմից ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու մասին «գործընթացը: Պետության կողմից ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու նպատակով սահմանվել է միջին որակական գնահատականի շեմ՝ բակալավրի եւ մագիստրոսի կրթական ծրագրերով 75 %, այս պարագայում՝ 417 ուսանողի: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ծրագիրն իրականացվում է առաջին անգամ, նախարարի հաջորդ հրամանով միջին որակական գնահատականների շեմերը նվազեցվել են՝ սահմանվելով՝ բակալավրի կրթական ծրագրով՝ 40%, մագիստրոսի կրթական ծրագրով՝ 50%: Հնարավորություն է ընձեռվել պետության կողմից ուսման վարձ մասնակի փոխհատուցելու 845 ուսանողի համար:

Ընթացիկ տարում 30 երկրներում գործող Սփյուռքի դպրոցներին տրամադրվել են շուրջ 62 000 օրինակ դասագիրք եւ այլ ուսումնական եւ օժանդակ նյութեր:

Ասուլիսի վերջում Աշոտյանն ասաց. «Ես այս անգամ չեմ խոսում ձախողումների մասին, քանի որ ոչ մի կրթական ծրագիր չի ձախողվել»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

## Վերսկսված բանակցությունները փորձում են ինտենսիվացնել՝ ամերիկյան նախաձեռնությունների հեռանկարով

*1-ին էջից*

**Փաստացի բանակցությունների վերսկսման հետ համանախագահները ինչ-որ հույսեր իսկապես կապում են, քանի որ կոչ են անում ապահովել բանակցություններում առաջընթացի հասնելուն նպաստող մթնոլորտ, միեւնույն ժամանակ կրկին հավասարության նշան դնելով կողմերի միջեւ, ինչը գուցե դիվանագիտական կամ մաքրքային մոտեցմամբ կարելի է արդարացի համարել, սակայն արդյունավետ՝ ոչ մի կերպ:**

**Մյուս կողմից, հետաքրքրական է, որ վերջին շրջանում ինչպես թվիթերյան կարճ հաղորդագրություններով, այնպես էլ մամուլի հետ առավել շատ շփվելու մոտեցմամբ զգալի ակտիվություն է դրսեւորում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ջեյմս Ուորլիքը, որը մինչեւ համանախագահների անունից մամուլի հաղորդագրության տարածումը հարցազրույց է տվել «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությանը:**

**Ուորլիքը տեղեկացրել է, որ Վիեննայում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները 90 րոպե առանձնազրույց են ունեցել, որին որեւէ մարդ ներկա չի եղել, զրույցն էլ, ըստ ամերիկացի համանախագահի, ավարտվել է հավաստով, թե նախագահները կարող են միմյանց հետ աշխատել: Ուորլիքը Վիեննայի հանդիպումը կառուցողական է որակել:**

**Հարցին, թե ո՞րն է ամենադժվարին խնդիրը նախագահների քննարկումներում, ամերիկացի համանախագահը նշել է, թե կան մի շարք շատ դժվարին հարցեր, որոնց պետք է անդրադառնալ: «Դա է պատճառը, որ այդ խոսակցությունը շարունակվում է արդեն 20 տարվա հրադադարից հետո: Դրանք դժվարին խնդիրներ են, սակայն, իրոք, ես հավատում եմ, որ երկու կողմերը կարող են գտնել ճանապարհ դեպի առաջ, որը, իրոք, օգնի երկու կողմերին, որ երկու կողմերը կարող են տեսնել ճանապարհ դեպի առաջ՝ կարգավորում, որ, իրոք, ոչ մեկը չկորցնի եւ բոլորը շահեն... Ոչ թե որ ժողովուրդը՝ լինի Լեռնային Ղարաբաղի կամ Հայաստանի, կամ Ադրբեջանի, զոհողություններ անի: Ոչ, մենք դա չենք խնդրում: Մեր հույսն այն է, որ կողմերը, բոլոր կողմերը կհամարեն, որ իրենց շահերից է բխում այս ձգձգվող հակամարտությանը երկարատեւ, խաղաղ կարգավորում գտնելը», մանրամասնել է Ուորլիքը:**

**Բոլոր խնդիրների շարքում ամերիկացի դիվանագետը մեծապես կարեւորել է «խոր անվստահությունը բոլոր կողմերի միջեւ»: Ուորլիքի համոզմամբ՝ այդ հարցը լուծելու ճանապարհը ժողովուրդների միջեւ շփումների մակարդակում է, ընդ որում՝ հայերը, ադրբեջանցիները, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ցանկանում են լավագույնը իրենց ընտանիքների համար, ապագայի համար, նրանք ցանկանում են խաղաղություն եւ բարգավաճում, ու ոչ ոք չի ուզում պատերազմ:**

**Թուրքական համատեքստում դեսպան Ուորլիքը կրկին հավաստիացրել է, որ ղարաբաղյան կարգավորման առումով Թուրքիայի եւ նրա տարածաշրջանային հարաբերությունների հետ ոչ մի առնչություն չկա, թեեւ Թուրքիան, որպես հարեւան, դերակատարություն ունի տարածաշրջանում: Ինչ վերաբերում է Իրանին, ապա, ըստ Ուորլիքի, ներկայումս որեւէ խողովակ չկա Իրանի հետ:**

**«Սա մի հակամարտություն է, որը կարող է լուծվել, եւ ես իրոք հույս ունեմ, որ քաղաքական առաջնորդները կարող են ուղի գտնել հանուն մարդկանց», հույս է հայտնել ամերիկացի դիվանագետը, ընդգծելով, որ «Ադրբեջանում, Հայաստանում եւ, անշուշտ, Լեռնային Ղարաբաղում» մեծացող նոր սերունդը միմյանց չի ճանաչում ու տեսնում է միայն լրատվամիջոցներով, ինչն աղավաղվում ու սխալ է մեկնաբանվում: Տվյալ դեպքում կարելի է ենթադրել, որ եթե նախկինում հայ-ադրբեջանական մերձեցման սակավաթիվ փորձեր էին արվում, ապա հիմա, հնարավոր է նաեւ ԱՄՆ-ից եկող միջոցներով, դրանք ինտենսիվանան:**

**Մյուս կողմից, եթե այս ամենին ավելացնենք նաեւ, որ Եվրամիության անունից էլ են հնչում քաղաքացիական հասարակության ու ընդհանրապես հակամարտության կողմերի հասարակությունների շփումների անհրաժեշտությունն ու կարեւորությունը, ապա հաջորդ տարվանից կարելի է սպասել այդ շփումները գործնականում հնարավոր դարձնելուն ուղղված քայլեր: Ուղղակի հուսանք, որ չի լինի նույն «արդյունավետությունը», ինչ ամերիկյան ներգրավվածությամբ ստացվեց հայ-թուրքական հարթակում:**

## Չվի դեֆիցիտ եւ գնաճ չեն լինի

*1-ին էջից*

**Հայաստանից ոչխարներն արտահանվում են նաեւ հարեւան Իրան՝ տարեկան մոտավորապես 100 հազար գլխաքանակ: Վարչության պետն ավելացրեց, որ անասնագլխաքանակի աճի ցուցանիշով Հայաստանն անցյալ տարի առաջին տեղն է զբաղեցրել ԱՊՀ երկրներում:**

**Գյուղատնտեսության փոխնախարարը ոչխարի արտահանման եւ ոչխարաբուծության զարգացման ցուցանիշը համարեց նախարարության ճիշտ քաղաքականության արդյունք, ինչի շնորհիվ ներկայումս Հայաստանում ոչխարների գլխաքանակը կազմում է մոտ 705 հազար: Նախատեսվում է այդ թիվը հասցնել 1,5 մլն-ի:**

**Տավարաբուծության եւ տավարի մսի արտադրության ծավալները կազմում են 48-50 հազար տոննա: Այստեղ էլ ծրագրվում է քայլեր ձեռնարկել այդ ցուցանիշը 10-11 հազար տոննայով ավելացնելու համար, ինչն ամբողջությամբ ինքնաբավ կդարձնի Հայաստանը տավարի մսի ապահովվածության առումով:**

**Նույն մոտեցումն է նախարարությունը որդեգրել նաեւ թռչնամսի արտադրության առնչությամբ: Ըստ Գրիշա Բաղիյանի՝ ներկայումս Հայաստան է ներկրվում 20-25 հազար տոննա թռչնի միս, իսկ տեղում արտադրվում է 7-8 հազար տոննա: Նպատակ կա տեղում արտադրվող թռչնի մսի ծավալները հասցել 20-25 հազա տոննայի:**

**Ջկնաբուծության ոլորտում անհրաժեշտություն կա անցնելու ջրի խնայողության ռեժիմի, քանի որ վերցվող ջուրն ավելին է, քան հավաքվողը: Դրա համար էլ պետք է ներդրվեն ջրի օգտագործման փակ եւ կիսափակ համակարգեր: Դրանով հանդերձ՝ փոխնախարարն աճ է ակնկալում նաեւ այս ոլորտում:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Կեղծ գիտնականներ

# Փակել խոտանի ճանապարհը

*«Ով չարը չի պատժում, նա նպաստում է չարի իրագործմանը»*

**Լեոնարդո դա Վինչի**

Յուրաքանչյուր ժողովուրդ աշխարհին հայտնի է դառնում ոչ այնքան իր պատմական ճակատագրով ու դրա հետ կապված մեծ ու փոքր իրադարձություններով, որքան այդ ժողովրդի կողմից համաշխարհային քաղաքակրթության գանձարան ներմուծած գիտության եւ մշակութային արժեքներով: Համոզված եմ, եթե աշխարհի որեւէ ծայրում հոլովվում են հայ կամ Հայաստան բառերը, մարդիկ առաջին հերթին մտաբերում են մեր հին ու նոր մշակույթը, գիտության մեր ձեռքբերումները: Ահա թե ինչու մտահոգ եմ այսօրվա մեր երիտասարդ սերնդի ընդհանուր զարգացման պրոբլեմներով՝ որքանո՞վ է նա պատրաստ շարունակելու մեր ազգային լավագույն ավանդույթները: Այդ կապակցությամբ ցանկանում եմ իմ մտորումները հայտնել երիտասարդ կադրերի պատրաստման հետ կապված մի քանի հարցերի շուրջ:

Հայ ժողովուրդն ունեցել է եւ ունի բացառիկ տաղանդով օժտված երիտասարդներ, որոնք իրենց գիտելիքներով, լայն էրուդիցիայով բարձր են պահել մեր հեղինակությունն ու արժանապատվությունը: Մենք հպարտանում ենք նրանցով: Սակայն վերջին տարիներին նկատելի է դառնում մռայլ մի երեւույթ, որը վտանգում է գիտական մտքի առաջընթացը մեզանում: Ինչի մասին է խոսքը:

Այս տարվա գարնանը հեռուստատեսությամբ եւ ինտերնետային կայքերում լուրեր սփռվեցին, որ Գերմանիայում պաշտոնանկ է արվել զինված ուժերի նախարարը: Նա իր ատենախոսության մեջ թույլ էր տվել գրագողություն: Նման մեկ-երկու դեպք արձանագրվել էր նաեւ եվրոպական այլ երկրներում. խստագույն պատիժը չէր ուշացել: Ռուսաստանում այդ նույն պատճառով լուծարվեցին խորհուրդներ, աշխատանքից ազատվեցին մի շարք պաշտոնյաներ: Չեղյալ համարվեց մեծ թվով (հազարից ավելի) պաշտպանված ատենախոսություններ: Թվում էր, թե նման հզոր պետությունների համար դրանք կարող են մանրուք համարվել: Բայց արի ու տես, որ այդպես չէ: Այդ երկրներում դա համարվեց խիստ դատապարտելի հանցանք:

Մեզ մոտ, դժբախտաբար, գրագողության եւ թեկնածուական միանգամայն թույլ աշխատանքներն անհանգստանալու առիթ չեն հանդիսանում: Հաշտվել ենք այդ խայտառակ փաստի հետ: Չես զարմանում, որ քեզ ծանոթ շարքային միջակությունը մի օր անսպասելիորեն կարող է ներկայանալ որպես գիտությունների թեկնածու (հետո էլ կպայքարի դոկտոր դառնալու համար, հետո աշակերտներ կունենա... (տեր աստված փրկի մեզ նման աշակերտներից):

Առիթ եմ ունեցել այդ հարցի շուրջը զրուցելու որոշ այրերի հետ. անհույս արձագանք: Մի անգամ էլ մեկը թե՝ դրա ժամանակը չէ, Ղարաբաղի խնդիր ունենք: Դժվարանում եմ ասել, նման մտածելակերպի տեր մարդիկ չգիտեն արդյոք, որ Ղարաբաղի, եւ ոչ միայն Ղարաբաղի, հարցի լուծումը պայմանավորված է նաեւ ազգային ինտելեկտի բարձր մակարդակով, մեծահմուտ դիվանագետներ ու համակողմանի զարգացած քաղաքացիներ ունենալով:

Ես նույնպես ստիպված հաշտվել եմ այդ վիճակի հետ ու կլռեի, եթե Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի օգոստոսյան գիտական խորհրդի նիստում, համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը ամենայն լրջությամբ չանդրադառնար այդ հարցին: Ինձ ուրախացրեց, որ հանրապետության ամենախոշոր բուհերից մեկի ղեկավարը սրտացավ է գիտակրթական ոլորտում տեղ գտնող արատների նկատմամբ: Ավելին. գիտեմ, որ նա հնարավորինս փորձում է վերջ դնել, կանգնեցնել թեկնածու դառնալու այս սպորտային մրցավազքը:

Իմ երկար կյանքի ընթացքում խուսափել եմ (չեմ հիշում նման որեւէ դեպք) աշխատանքային վերադասների մասին գովեստներ շռայլել, չնայած երբեմն նրանք արժանի են եղել: Մտավախություն եմ ունեցել, որ բարեկամներս ինձ ճիշտ չեն հասկանա, կմտածեն՝ շողոքորթում է: Այսօր զղջում եմ դրա համար: Ճիշտ է ասվում՝ «Ճշմարտությունը ժամանակին պետք է հնչի, նրա ուժը դրանում է. ուշացած ճշմարտությունը մխիթարանքի է նմանվում»: Ուրեմն մարդիկ թող ժամանակին լսեն իրենց բարի գործի գնահատականը: Շատ եմ ափսոսում, որ ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանի ռեկտորության տարիների կապակցությամբ դրվատանքի խոսք չի ասվել: Չէ որ այդ նվիրյալ գիտնականի ջանքերի շնորհիվ Մանկավարժական համալսարանը համալրվեց մի շարք անվանի գիտնականներով: Ինչպես չհիշել ակադեմիկոս Գեւորգ Բաղդասարյանին, ամենադեմոկրատ ռեկտորին, անսահման բարի հոգու տեր, անկաշառ գիտնականին:

Որպեսզի հետագայում լռելուս համար չզղջամ, ինքս ինձ չնախատեմ, կուզեի այսօր՝ ճիշտ եւ ճիշտ ժամանակին, մի քանի խոսք ասել մեր համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի կատարած աշխատանքների մասին:

Մեր հաստատության հետ կապ ունեցող մարդիկ կհամաձայնեն, որ վերջին երեք, երեքուկես տարիների ընթացքում այստեղ որոշակի տեղաշարժեր են կատարվել՝ ի նպաստ գիտաուսումնական գործընթացի որակական բարձրացման, տնտեսական բազայի ամրապնդման, համալսարանի միջազգային կապերի ընդլայնման: Ակտիվ է եղել համագործակցությունը եվրոպական լավագույն համալսարաններից մեկի՝ Օուլի (Ֆինլանդիա) հետ՝ փոխադարձ այցելություններ, փորձի փոխանակում...

Այսօր համալսարանում աննախադեպ լավ պայմաններ են ստեղծված ուսանողության եւ պրոֆեսորա-դասախոսական կազմի ուսումնա-հետազոտական աշխատանքների համար:

Տարբեր մասնաշենքերում՝ գրադարանային նոր միավորներ ու ընթերցասրահներ, նաեւ վերջերս բացված էլեկտրոնային ընթերցասրահը: Կարելի է վստահորեն ասել, որ դրանք համազոր են եվրոպական նշանավոր համալսարաններում եղածների հետ:

Համալսարանի նորաստեղծ գեղեցիկ ու հարուստ թանգարանը, իրոք, անհրաժեշտություն էր: Նոր ընդունված պատանին պետք է քաջատեղյակ լինի իր բուհի պատմությանը, նրա անցած ուղուն. ովքեր են սովորել, ովքեր են դասավանդել, ինչ դեմքեր են եղել: Դա պարտավորեցնող գործոն է՝ բարոյական խթան ապագա մանկավարժի համար: Այսօր համալսարանն ունի հենակետային վարժարան, հովանավորում է հայոց մեծ մանկավարժ Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանը: Կարելի է հիշել նոր կազմակերպված ամբիոնները, նոր մասնագիտությունները, նոր կադրերը...

Դրական շատ բան է արվում նաեւ վարչատնտեսական աշխատանքների գծով. մասնաշենքերի կապիտալ վերանորոգումները, շենքերի շրջապատի բարեկարգումը, անվտանգության համակարգի ստեղծումը, աշխատավարձերի շարունակական բարձրացումը, ուսումնական վարձերի կայունությունը. ամեն մի նորույթի վրա կանգ չես առնի... Դժվար է հավատալ, որ ընդամենը 3-3,5 տարվա ընթացքում կարելի էր այդքան բան անել... Այսօր իրականություն է Մանկավարժական համալսարանի ընդհանուր վարկանիշի աննախադեպ բարձր լինելը:

Ավելին կարելի է ասել, բայց անցնենք հիմնական խնդրին՝ գիտական աստիճաններ ձեռք բերելու մրցավազքին: Խորհրդային շրջանում մեր փոքրիկ հանրապետությունը հայտնի էր գիտա-կրթական մեծ ներուժով: Ողջ Խորհրդային Միության մեջ առաջին շարքերում էինք գիտության եւ արվեստի նվաճումների հարթակում: 1988-ի ավերիչ երկրաշարժը, խորհրդային հզոր տերության փլուզումը, շուկայական հարաբերությունների ոչ բնականոն ձեւավորվելն ու զարգացումը (ավա՜ղ, եղած արժեքների փոշիացմամբ) ծանր հետեւանքներ ունեցան մեր հանրապետության համար: Այսօր հայ ժողովուրդը կանգնած է համաշխարհային տարբեր մարտահրավերների առջեւ: Երեւի թե ոչ մի անգամ այնքան այժմեական հնչեղություն չի ունեցել Եղիշե Չարենցի մարգարեական խոսքերը՝ «Հայ ժողովուրդ, քո փրկությունը քո միասնության մեջ է»:

Միասնության գաղափարը, սակայն միայն ձեռք ձեռքի տված կանգնելը չէ, հայրենասիրական լոզունգներ արտասանելու մեջ չէ. ժամանակները փոխվել են: Միասնությունը հաղթում է, երբ կա ազգային խորը գիտակցություն, որը ներառում է նաեւ գիտության եւ մշակույթի բոլոր բնագավառները՝ սկսած ասպարեզ մտնող երիտասարդ կադրերի գիտելիքներից, ամեն մի ատենախոսությունից: Վաղը այդ կադրերն են մեր ազգային կարեւոր խնդիրների լուծողները, հետեւաբար ամենայն պատասխանատվությամբ պետք է մոտենալ հիրավի ազգանպաստ այդ գործին:

Հիմա շատ երկրներում, առաջին հերթին մեր հարեւան, ամեն ինչ՝ նյութական իսկայական միջոցներ ներդրվում է երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Նրանց առջեւ բացված են աշխարհի լավագույն համալսարանների ու գիտական կենտրոնների դռները: Մեր հնարավորությունները, ավաղ, համեստ են: Բոլոր դեպքերում մեր հույսը մեր տաղանդավոր երիտասարդներն են, որոնց տրվում են մեզանում եղած հնարավորությունները, լավագույններին տրվում է հնարավորություն արտասահմանի մրցունակ համալսարաններում ուսում ստանալու կամ մասնագիտանալու:

Այս պարագայում եւ պայմաններում հանցագործություն է ժամանակի եւ միջոցների կորուստը: Իսկ ինչ է կատարվում. ավարտելով բարձրագույն ուսումնական հաստատությունը, շնորհալիներն իրոք արժանավայել շարունակում են ուսումը բարձր աստիճանում՝ ասպիրանտուրա՝ մուտք գործելով գիտության գաղտնաշխարհը: Սակայն ոմանք էլ, գիտենալով իրենց նվազ կարողությունների չափը, այնուամենայնիվ, անձնական վարկանիշ ստեղծելու, երբեմն էլ տարկետումներ ստանալու, կամ զանազան ապահովագրումների համար խցկվում են ասպիրանտուրա: Նրանց հույսը «բարեգութ գիտական ղեկավարներն» են, որոնք, իհարկե, չեն ուշանում հայտնվելուց: Մնացածը, ինչպես շախմատում են ասում, տեխնիկայի գործ է...

Չարժե այլեւս մանրուքների մեջ մտնել... նաեւ բարոյահայրենասիրական քարոզներ կարդալ, կրկնել հայտնի ասույթները՝ «Բարեգործել՝ ասել է, թե փողը նպաստում է բարեկեցիկ կյանքին, բայց առողջություն ու երջանկություն չի բերում», «Հեշտությամբ եկածը հեշտությամբ էլ գնում է»: Արհեստի աշակերտ, աշխարհահռչակ զորավար Ալեքսանդր Մակեդոնացին կարգադրել էր «իրեն թաղել աջ եւ ձախ բաց արած ձեռքերով, որ մարդիկ տեսնեն, որ ինքն աշխարհից ոչինչ չի տանում»: Եվ այսպես կարելի է շատ օրինակներ բերել: Սակայն ներկայիս փողապաշտության ու նյութապաշտության համաճարակի պայմաններում մեր գիտական մի քանի ղեկավարների համար գլխավոր նշանաբանը շատ հնացած, բայց ուժը չկորցրած «Փողի քսակը բարձրացնում է մարդու հասակը» խոսքերն են: Նպատակին հասնելով նրանք ինքնավստահ, դիք-դիք ման են գալիս՝ փնտրելով նորերին: Եզրակացությունը մեկն է՝ չկա գործող օրենքի ուժը: Մեզ մոտ եվրոպական կամ ռուսական պատժամիջոցները չեն գործի. մարդկանց պաշտոնից հանել, զրկել ղեկավարելու իրավունքից, չեղյալ հայտարարել պաշտպանած մի շարք ատենախոսություններ, ոչ, չի ստացվի: Ներքին կապերը շատ ուժեղ են, նրանց ներկայացուցիչները նաեւ վերին ատյաններում են. ձեռքը ձեռք է լվանում... Բայց եւ այնպես, թեկուզ եւ աստիճանաբար, կարելի է վիճակը բարելավող որոշակի քայլեր կատարել:

Իմ գործընկերներից մեկը, որը վերջերս էր եղել Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում, պատմում է, որ այնտեղ հատկապես մրցութային ֆակուլտետներում, նույնիսկ ընդունվելուց հետո դիմորդները մի շատ հեղինակավոր հանձնաժողովի կողմից ենթարկվում են լրացուցիչ հարցաքննության: Այդ արգելքը հաղթահարելուց հետո միայն նրանց անունները գրվում է ընդունվողների ցանկում:

Մեզանում ոչ թե համալսարան ընդունվողների, այլ արդեն ատենախոսությունը պաշտպանության ներկայացնող մարդկանց համար կարելի է Լոմոնոսովի համալսարանի օրինակով նման քննություն կազմակերպել, միայն թե հանձնախումբը պետք է լինի շատ հեղինակավոր, որի խոսքն անվերապահ ուժ ունենա, լինի ճշմարիտ եւ վերջնական: Այդ հարցաքննության ընթացքում վատ չէր լինի տալ նաեւ գրավոր հանձնարարություն՝ ստուգելու հայցորդին, թե նա որքանով է տիրապետում գրավոր խոսքին, կարո՞ղ է մի քանի էջում իր միտքն առանց սխալների շարադրել:

Մեր առաջարկը հիմնախնդիրը կարգավորելու տարբերակներից մեկն է. կարող են ավելի նպատակահարմար առաջարկություններ լինել, միայն թե՝ պաշտպանության կանգնող անձնավորությունը պարտավոր է այդ վերջին դժվարին խութը հաղթահարել:

**ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ**
**Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ**

## Միջազգային

# Վլադիմիր Պուտինի մեծ ասուլիսը

Դեկտեմբերի 19-ին Մոսկվայի Միջազգային առեւտրի կենտրոնի շենքում տեղի ունեցավ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի թվով 9-րդ մեծ մամուլի ասուլիսը, որին մասնակցելու համար Ռուսաստանից եւ այլ երկրներից հավատարմագրվել էին զանգվածային լրատվության միջոցների ավելի քան 1.300 ներկայացուցիչներ, այդ թվում նաեւ՝ Մոսկվայում «**Ազգի**» հատուկ թղթակից Գոհար Բոստոյանը:

Ասուլիսը մեկնարկեց ժամը 12.00-ին եւ նախատեսված էր անցկացնել մեկուկես ժամից ոչ ավելի, սակայն աննախադեպ մեծ հետաքրքրություն առաջացրած այդ հանդիպումը տեւեց ավելի քան 4 ժամ, ինչը ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովն անվանեց «նախագահի մեծահոգության արտահայտություն»:

Հատկանշական եւ, կարծում եմ, Հայաստանի համար եւս չափազանց ուսանելի եւ ընդօրինակման արժանի էր ոչ միայն երկրի նախագահի համար կազմակերպված ասուլիսի մասշտաբայնությունը, որին մասնակցում էին տարածաշրջանի եւ մի շարք այլ երկրների (առանց բացառության եւ խտրականության) լրատվամիջոցների ներկայացուցիչներ, այլ նաեւ հանդիպման օնլայն՝ առցանց ձեւաչափը, որը ուղիղ հեռարձակվում էր ինչպես ռուսական «Առաջին», «Ռոսիա-1», «Ռոսիա-24» ալիքներով, այնպես էլ youtube-ի ինտերնետային ցանցով:

Իսկ դահլիճում, հանդիպման սկզբից մինչեւ ավարտը, ավելի քան 4 ժամ շարունակ, ձեռքերի անտառ էր եւ հարցերի տեղատարափ, որոնց պատրաստակամորեն եւ համբերատար պատասխանում էր Ռուսաստանի նախագահը:

Վլադիմիր Պուտինին ուղղված հարցերը ընդգրկում էին ամենատարբեր ոլորտները՝ Ռուսաստանի ներքաղաքական կյանք, քաղաքական զարգացումներ, տարածաշրջանային հակամարտություններ... Մասնավորապես, հարցեր հնչեցին ռուս-ամերիկյան հարաբերությունների, ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենի, սիրիական հակամարտության, Ուկրաինայում ստեղծված ներքաղաքական ճգնաժամի, Վրաստանի հետ հետագա հարաբերությունների, Սոչիում կայանալիք օլիմպիադայի, երկրի Սահմանադրության 20-ամյակի կապակցությամբ համաներման եւ շատ ու շատ այլ հարցերի վերաբերյալ:

«**Ազգի**» թղթակցին, ցավոք, այդպես էլ չհաջողվեց հնչեցնել հարցը, քանի որ Վլադիմիր Պուտինը դահլիճում «անկանխատեսելի» էր եւ ամեն անգամ «ձեռքերի անտառից» ինքն էր մատնացույց անում լրագրողներին: Իսկ մեր հարցն այսպիսին էր. *«Մեծարգո պարոն նախագահ, դեկտեմբերի 12-ին Դաշնային ժողովին ուղղված Ձեր ամենամյա ուղերձում անդրադառնալով աշխատանքային խմբերի կողմից «Ճանապարհային քարտեզի» նախապատրաստման աշխատանքներին, ինչին պետք է հաջորդի Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամագրվելու գործընթացը, վստահություն եք հայտնել, որ եվրասիական ինտեգրացիան ոչ միայն նոր հեռանկարներ կբացի անդամ-երկրների համար, այլ նաեւ՝ մեծ հետաքրքրություն կառաջացնի հարեւան երկրների համար, այդ թվում նաեւ Ուկրաինայի: Ասացեք, խնդրեմ, Մաքսային միության անդամ դառնալու հանգամանքը, կոնկրետ Հայաստանի դեմքում, որքա՞ն եւ ի՞նչ քայլերով կբարելավի ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը: Կարո՞ղ եք մեկ-երկու խոսքով փաստեր մատնանշել, որոնք, կարծում եմ, տեսանելի եւ շոշափելի կլինեն հասարակ ժողովրդի, այդ թվում նաեւ՝ Ձեր մատնանշած հարեւանների համար»:*



Ինչեւէ, Հայաստանին վերաբերող հարցը չհնչեց, բայց փոխարենը՝ Վլադիմիր Պուտինը անդրադառնալով ռուս-վրացական կնճռոտ խնդրին, նշեց, որ իր վերաբերմունքը Վրաստանի ղեկավարության հանդեպ փոխվել է, իսկ վրաց ժողովրդի հանդեպ՝ ոչ. «Վրաց ժողովրդի նկատմամբ նույնիսկ պատերազմական շրջանում վերաբերմունքը բարեկամական է եղել, որովհետեւ մենք խոր մշակութային եւ հոգեւոր կապեր ունենք»: Վլադիմիր Պուտինը չթաքցրեց, սակայն, որ երկու երկրների միջեւ կա խնդիր, որը ռուսական կողմի մեղքով չի ծագել: «Մենք չենք պատերազմը սկսել, դա այժմ արդեն բոլորն են ընդունում: Ձեւավորվել է մի իրականություն, որը մենք չենք կարող անտեսել: Բայց նաեւ չենք կարող անտեսել այն ազդակները, որ գալիս են վրացական նոր իշխանությունների կողմից»: Պուտինը հայտարարեց, որ հարաբերությունները վերականգնելու ճանապարհին արդյունավետ միջոց կարող է դառնալ վիզային ռեժիմի վերացումը. «Դա կօգնի մարդկանց շփվել մեկմեկու հետ, ինչպես նաեւ ՌԴ-ում գործող վրացական ձեռնարկություններին եւ պայմաններ կստեղծի հարաբերությունների հիմքային եւ վերջնական կարգավորման համար»:

Ասուլիսի ընթացքում Պուտինը բացատրել է նաեւ Ուկրաինային 15 միլիարդ դոլար տրամադրելու պատճառը. «Ռուսաստանը բազմամիլիարդանոց օգնություն է տրամադրել Ուկրաինային, քանի որ երկու երկրներին կապում են բարեկամական հարաբերությունները: Մենք Ուկրաինայի հետ համագործակցելու որոշում ընդունել ենք՝ մի կողմից ելնելով մեր առանձնահատուկ հարաբերություններից, մյուս կողմից առաջնորդվելով ուկրաինացի ժողովրդի շահերով եւ իրատեսական հաշվարկներով: Ինչո՞ւ ոչնչացնել մեր հիմնական գործընկերոջը: Եթե մենք Ուկրաինային եղբայրական երկիր ենք համարում, ապա պարտավոր ենք օգնել այդ դժվարին պահին, քանի որ տնտեսապես երկիրը շատ ծանր վիճակում է հայտնվել»:

Անդրադառնալով Իրանի միջուկային խնդրին եւ դրա վերջնական հնարավոր լուծմանը՝ ՌԴ նախագահը հայտարարել է. «Իրանական միջուկային հարցում գրանցված առաջընթացը կապված է մեծապես ԱՄՆ ադմինիստրացիայի պրագմատիկ դիրքորոշման հետ: Չի կարելի մոռանալ, որ Միացյալ Նահանգների ադմինիստրացիան ներկա պահին գտնվում է տարբեր ուժերի ճնշման տակ, այդ թվում՝ ԱՄՆ Կոնգրեսի, որն այս հարցում հակված է Իսրայելի դիրքորոշմանը»: Պուտինի խոսքով՝ Իրանը տարածաշրջանի առաջնահերթային գործընկերներից մեկն է Ռուսաստանի համար: «Մենք նպատակ ունենք բոլոր ուղղություններով զարգացնել հարաբերություններն Իրանի հետ: Ինչ վերաբերում է Իրանի դեմ գործող պատժամիջոցներին, ապա դրանց կիրառման վերաբերյալ որոշումը շատ անարդյունավետ որոշում է: Այն խնդրի լուծման հարցում ոչ մի լավ բանի չի բերի: Հույս ունեմ, որ իմ հայտարարությունները չեն խանգարի մեզ իրանական խնդրի լուծման տարբերակներ գտնելուն: Իրանցի ժողովուրդն իրավունք ունի զարգացնել իր միջուկային ծրագիրը խաղաղ նպատակներով, եւ միջազգային հանրությունն իրավունք չունի Իրանից խտրական բնույթի սահմանափակումներ պահանջել»:

Ասուլիսի ընթացքում ՌԴ նախագահին հարց ուղղվեց նաեւ տպագիր մամուլի առջեւ ծառացած դժվարությունների մասին՝ մամուլն այսօր մի կերպ է դիմակայում էլեկտրոնային լրատվամիջոցներին ու հեռուստատեսությանը, առանց պետական հոգածության եւ աջակցության թերթերն այլեւս ի վիճակի չեն հոգալու իրենց ծախսերը, մամուլի կրպակները չեն ցանկանում թերթեր վերցնել իրացնելու համար, փորձառու եւ տաղանդավոր լրագրողները մնում են անգործ... ցավոտ խնդիրներ, որոնք, ըստ «Собеседник» շաբաթաթերթի լրագրողուհու՝ ներկայումս համընդհանուր են ամբողջ աշխարհում: «Բայց չէ որ Ռուսաստանը տպագիր մամուլի մեծ ավանդույթներ ունեցող երկիր է, որտեղ շատերը, ցավոք արդեն՝ ավագ սերնդի ներկայացուցիչները, սիրում են կարդալ հատկապես տպագիր խոսքը»: Ի դեպ, լրագրողուհին նաեւ մի հետահայաց դիպված հիշեց. «Собеседник»-ը գունավոր շաբաթաթերթ է, սակայն 30 տարի առաջ ստեղծված թերթի առաջին համարը լույս է տեսել սեւ-սպիտակ, քանի որ այդ օրը մահացել էր Անդրոպովը:

ՌԴ նախագահը որոշ նշումներ կատարեց եւ խոստացավ վերստին ուսումնասիրել տպագիր լրատվամիջոցներին առնչվող հարցերն ու դժվար կացությունը մեղմելու ելքեր գտնել:

Հուսանք, որ մի գեղեցիկ օր էլ Հայաստանում նույնպես բարձր մակարդակով կբարձրաձայնվեն նման ելքեր գտնելու տարբերակները...

**ԳՈՀԱՐ ԲՈՍՏՈՅԱՆ**
**Մոսկվայում «Ազգի» հատուկ թղթակից**

# Լոնդոնում քննում են թատրոնի առաստաղի փլուզման պատճառները

**Լոնդոնի «Ապոլլո» թատրոնի առաստաղի մի մասի փլուզման հետեւանքով դեկտեմբերի 19-ի երեկոյան տուժել է առնվազն 76 մարդ, հաղորդում է BBC News հեռուստաալիքը: Փլուզումը տեղի է ունեցել «Շան առեղծվածային գիշերային սպանություն» ներկայացման ժամանակ:**

**Ականատեսները եւ տուժածները պատմել են, որ փլուզումից առաջ լսվել է ճարճատյուն: Ոմանք էլ հայտարարել են, որ նախքան փլուզումը առաստաղի ճեղքերից սկսել է ջուր հոսել:**

**775 տեղանոց դահլիճում եղել է 720 հանդիսական: Նրանցից 7-ը ծանր վիրավորվել են, սակայն ոչ մեկի կյանքին վտանգ չի սպառնում: Բժիշկները տեղում օգնություն են ցույց տվել 51 մարդու:**



**Առաստաղի մի մասը փլուզվել է ներկայացման սկզբից 45 րոպե անց: Մարկ Հեդդոնի վեպի հիման վրա բեմադրված վերոհիշյալ ներկայացումը 2013-ին ստացել է Լոուրենս Օլիվիեի 7 թատերական մրցանակ, նշում է «Դեյլի մեյլ» թերթը:**

**Միջադեպի պատճառները դեռ անհայտ են: Ոստիկանությունն անմիջապես հերքել է ահաբեկչության կամ հանցավոր գործունեության վարկածը: Փրկարարները չեն կարծում, թե հարեւան շենքի շինարարական փայտամածները որեւէ կապ ունեցած լինեն առաստաղի փլուզման հետ: Փլուզումից 1 ժամ առաջ Լոնդոնում եղել էր սաստիկ ամպրոպ, սակայն պարզ չէ՝ դա ազդե՞լ է արդյոք փլուզման վրա:**

**«Ապոլլո» թատրոնի շենքը կառուցվել է Լոնդոնի կենտրոնում՝ Ուեսթ-Էնդ շրջանում 1901-ին եւ համարվում է պատմության հուշարձան: Թատրոնը գործում է նույն թվականից:**

**Պ. Ք.**

# Տոկիոյի նահանգապետը հրաժարական տվեց կոռուպցիոն սկանդալի պատճառով

**Տոկիոյի նահանգապետ Նաոկի Ինոսեն կոռուպցիոն սկանդալի պատճառով թողել է պաշտոնը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Հատկապես հրավիրված մամլո ասուլիսում իր պաշտոնաթողության մասին հայտարարելով՝ Ինոսեն ասել է, որ այսուհետեւ նահանգապետի պաշտոնում իր մնալը «կարող էր բացասաբար ազդել Տոկիոյի 2020 թ. օլիմպիադայի նախապատրաստության վրա»:**

**Տոկիոյի 2012 թ. նահանգապետական ընտրություններում հաղթած Նաոկի Ինոսեն մեղադրվում է այն բանում, որ ընտրարշավն սկսելուց առաջ բժշկական կլինիկաների ցանցի սեփականատիրոջից ստացել է 50 մլն իեն (մոտ 500 հազար ամերիկյան դոլար):**

**Ճապոնիայի օրենսդրությունը քաղաքական գործիչներին արգելում է փող վերցնել մասնավոր բիզնեսի ներկայացուցիչներից: Ինոսեն պնդում էր, որ ինքը 50 մլն իեն պարտք է վերցրել ոչ թե ընտրարշավի, այլ անձնական կարիքների համար: Բացի դրանից, նահանգապետի խոսքերով, ինքն արդեն լիովին մարել է պարտքը:**

**Ինոսեի բացատրությունները, սակայն, չբավարարեցին քաղաքային խորհրդարանի անդամներին, եւ նրանք որոշեցին հատուկ հանձնաժողով ստեղծել նահանգապետի խոշոր գումար ստանալու հանգամանքները քննելու համար: Ինոսեն որոշեց նահանգապետի պաշտոնը թողնել՝ չսպասելով խորհրդարանական քննության արդյունքներին:**

**Պ. Ք**

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ -110

## Թվայնացված ձայնադարան՝ երաժշտասեր հանրության լայն լսարանի համար



ՎիվաՍել-ՄՏՍ-ի, Մշակույթի նախարարության եւ «Պրոլայթինգ» ընկերության համագործակցության արդյունքում՝ թվայնացվել է Արամ Խաչատրյանի բազմաժանր ստեղծագործական ժառանգությունը: 9 ձայնասկավառակ, 1 տեսասկավառակ եւ բուկլետ ներառող հավաքածուն ստեղծվել է Հայաստանի հանրային ռադիոյում պահպանվող ձայնագրությունների եւ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տրամադրած նյութերի հիման վրա:

Մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 110-ամյակին նվիրված հոբելյանական հրատարակության թողարկումը նախատեսված է 1000 օրինակով: Երկերի թվայնացված անթոլոգիան լույս է տեսել առաջին անգամ: Բազմաժանր ստեղծագործությունների կատարողական կազմում ընդգրկվել են համաշխարհային հռչակ վայելող, հայ եւ օտարազգի պրոֆեսիոնալ երաժիշտներ: Իսկ սիմֆոնիկ ժանրի բազմաթիվ ստեղծագործություններ հնչում են իր՝ հեղինակի ղեկավարությամբ:

«Ժամանակն առաջ է շարժվում... տեխնոլոգիաները զարգանում են՝ սերունդներին առաջարկելով նոր լուծումներ: Իսկ մնայուն արժեքները շարունակում են փայլել անկախ ժամանակներից՝ լուսավորելով մարդկության ճանապարհը: Մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ստեղծագործական ժառանգությունն այդ արժեքներից է: Այն թույլ է տալիս կյանքն ընկալել հոգու աչքերով եւ զգալ երաժշտության անսահման մեծ ուժը:

Հպարտ ենք այս նախագծի իրականացմանն աջակցելու համար»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Ինքնատիպ այս հավաքածուն թողարկվել է ոչ կոմերցիոն նպատակով եւ նախատեսված չէ վաճառքի համար: Ակնկալվում է այն տրամադրել աշխարհի խոշոր համալսարանների գրադարաններին, երաժշտական փառատոներին եւ հաստատություններին, կոմպոզիտորական միավորումներին եւ դասական երաժշտություն պրոպագանդող ռադիոկայաններին: Սերունդներին հղվող պատգամը կարեւոր է. սիրով փափայել մեզ հասած փայլուն ստեղծագործական ժառանգությունը:

## «Ավատար» ֆիլմի նկարահանումները՝ Նոր Զելանդիայում



Պետեր Ջեկսոնի երկու տրիլոգիաների («Մատանիների տիրակալը», «Հոբբիթ») «հայրենիքը» (Միջին Երկիր) դարձած Նոր Զելանդիան մի քանի ամսով կվերածվի Պանդորայի:

Ջեյմս Քամերոնը հայտարարել է «Ավատարի» շարունակվող 3 ֆիլմերի՝ Նոր Զելանդիայում նկարահանելու մասին: Այսպիսով Նոր Զելանդիայի տնտեսությունը կստանա հերթական ներարկումը Հոլիվուդից:

Նոր Զելանդիայի տնտեսական զարգացման նախարար Սթիվեն Ջոյսը նշել է, որ «Ավատարի» այս նոր նկարահանումները կստեղծեն հարյուրավոր նոր աշխատատեղեր երկրում: Fox կինոստուդիան նույնպես պարտքի տակ չի մնում, երկրի կառավարությունը Քամերոնին 25 %-ի չափով պատկառելի հարկային զեղչեր է տրամադրում:

Ֆիլմի ստույգ բյուջեն ռեժիսորը չի հայտարարում, սակայն հայտնի է, որ Նոր Զելանդիայում կմնա շուրջ 412 մլն ԱՄՆ դոլար: Ինչպես նշել է ռեժիսորը, հարկային այս մոտեցման շնորհիվ ֆիլմի ստեղծման արժեքը չի գերազանցի 1 մլրդ դոլարը:

2009-ին էկրաններին բարձրացած «Ավատար» ֆիլմը կինոյի պատմության մեջ համարվում է ամենադրամարկղայինը, որի շահույթը կազմում է ավելի քան 2,7 մլրդ դոլար: Երեք ֆիլմերի նկարահանումները Քամերոնը պատրաստվում է անել միաժամանակ:

«Ավատար-2»-ի ներկայացումը պատրաստվում է 2016-ի դեկտեմբերին, 3-րդը 2017-ին եւ 4-րդը՝ 2018-ին:

Ըստ Նոր Զելանդիայի վարչապետի հետ նախնական պայմանավորվածության, ապագա «Ավատար»-ներից մեկի համաշխարհային պրեմիերան տեղի կունենա այդ երկրում:

Մ. Բ.

## Հենրիկ Սիրավյանի 85-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթ՝ այսօր

Գեղանկարիչ Հենրիկ Սիրավյանը ծնվել է 1928 թ. Երեւանում: 1943-1948 թթ. ուսանել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, հետագայում՝ 1948-1954 թթ. ուսումը շարունակել Երեւանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարչության բաժնում: 1954 թ. մասնակցել է ցուցահանդեսների, 1956 թ-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է եղել:

Նկարիչը ստեղծագործել է ամենատարբեր ժանրերում՝ տուրք տալով առավելապես հայրենի եզերքի բնապատկերներին: 1950-ական թթ. 2-րդ կեսին ձեւավորվում էր խորհրդահայ մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչությունը, որի վառ ներկայացուցիչներից էին ժամանակի երիտասարդ նկարիչներ Հ. Զարդարյանը, Վան Խաչատուրը եւ Հ. Սիրավյանը: 1958-1968 թթ. Սարյանի ղեկավարությամբ նկարիչն իրականացնում է «Հայաստան» (1966) եռապատկեր որմնանկարը Սունդուկյանի անվան պետական թատրոնի ճեմասրահում:



1962 թ. Սիրավյանը մասնակցում է պատմական «Հինգի ցուցահանդեսին» (Ա. Ղափանցյան, Լ. Բաժբեուկ-Մելիքյան, Ալ. Գրիգորյան, Մ. Ավետիսյան, Հ. Սիրավյան): Նույն՝ 1962 թ. Մրցանակի է արժանացել Մոսկվայում անցկացվող համամիութենական երիտասարդական ցուցահանդեսում «Լ. Բաժբեուկ-Մելիքյանի» դիմանկարի համար: Այս տարիներին ստեղծած որմնանկարներն ու պատկերները կատարված նկարները (վիտրաժները) զարդարում են Հայաստանի գրողների միության նախագահության ճեմասրահը, Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի Կոմիտասի թանգարանի գմբեթը (Հ. Հակոբյանի, Ա. Մելքոնյանի հետ) եւ այլն: 1977 թ. գեղանկարիչը ստանում է Հայաստանի վաստակավոր նկարչի կոչում:

Սիրավյանի հաստոցային աշխատանքների ճնշող մեծամասնությունը կազմում են՝ գյուղական, ճարտարապետական, լիրիկական, բայց մոնումենտալ, զուտ բնանկարները, այլաբանորեն իմաստավորված թեմատիկ հորինվածքները:

Գեղանկարիչ Հենրիկ Սիրավյանի ծննդյան 85-ամյա հոբելյանին նվիրված հուշ- ցերեկույթը եւ ցուցահանդեսի բացումը տեղի կունենա Հայաստանի ազգային պատկերասրահում՝ այսօր, դեկտեմբերի 21-ին, ժ. 14.00-ին: Հուշ-ցերեկույթի շրջանակներում տեղի կունենա նաեւ «Սիրավ. Դու հավերժող իմ Հայաստան» տեսաֆիլմի պրեմիերան:

## Երկրաշարժի 25-ամյակը Կառնեգի Հոլում

### (Հանգանակվել է ավելի քան 50.000 դոլար)

Սպիտակի ավերիչ երկրաշարժի 25-րդ տարելիցի առթիվ ՀԲԸՄ-ի Նյու Յորքի գրասենյակի Հատուկ միջոցառումների կոմիտեն (ՀՄԿ) կատարողական արվեստի ներկայացուցիչների համերգ է կազմակերպել դեկտեմբերի 7-ին Կառնեգի Հոլի «Ուեյլ Ռեսիթալ» դահլիճում: Ծրագիրը հագեցած է եղել ճանաչված երաժիշտների ստեղծագործություններով: Թոմաս Բարրիերոն առաջին անգամ կատարել է «Սոխակի մահը» ստեղծագործության վրա հիմնված «Rossignol Mecanique»-ը, որը նրան 2012-ին արժանացրել էր առաջին մրցանակի Սայաթ-Նովայի անվան միջազգային մրցույթում:

Մեխիկոյի քաղաքացի Բարրիերոն խմբավարի պաշտոնը կատարելուց առաջ խոսել է Սայաթ-Նովայի բանաստեղծությունների իր վրա թողած ազդեցության մասին: «Շատ եմ մասնակցել մրցույթների, բայց երբեք չեմ հանդիպել նման ազդեցիկ մարդկանց խմբի: Հայկական արմատներ չունեմ, բայց ՀԲԸՄ-ի Սայաթ-Նովայի անվան միջազգային մրցույթը ինձ ծանոթացրեց հայկական կենսախինդ համայնքի եւ նրա անհավատալիորեն հարուստ երաժշտական ժառանգության հետ, որը շարունակում է ոգեշնչել ինձ», ասել է նա: «Rossignol Mecanique»-ը ընդամենը մեկն է եղել այն ստեղծագործություններից, որոնցում միահյուսվել են հայկական ավանդական երաժշտությունն ու ժամանակակից ռիթմերը:

Մաքսիմո Օլիվիերի «Odes Arme̕niennes»-ը, որը նույնպես առաջին անգամ է հնչել, իր մեջ ներառել է Սայաթ Նովայի չորս բանաստեղծությունների երաժշտական մշակումները: Ներկաները մեծ բավականություն են ստացել նաեւ լսելով Խաչատրյանի, Հարությունյանի, Միրզոյանի եւ Մանսուրյանի ստեղծագործությունները:

Երիտասարդ կատարողները նույնպես արժանացել են մեծ գնահատականի: Պիեռ Պետրոսյանը (հոբոյ, դուդուկ եւ անգլիական եղջերափողակ), Անի Գալայճյանը (թավջութակ), Հենրիկ Կարապետյանը (ջութակ եւ ալտ), Սոլանժ Մերինյանը (մեցցոսոպրանո), Նազիկ Զաքրյանը (ջութակ), Վարդա Զաքրյանը (դաշնամուր) եւ Ադամ Տենդլերը (դաշնամուր) դարձել են նվագախմբային կատարողական արվեստի մշտական անդամներ: Համերգի գեղարվեստական ղեկավարն է եղել Նազիկ Զաքրյանը, իսկ կատարողական արվեստի բաժնի տնօրենը՝ Հայկ Արուտյունյանը:

Առատաձեռն նվիրատվությունների շնորհիվ ավելի քան 50 հազար դոլար է հանգանակվել, որը ծախսվելու է կատարողական արվեստի հետագա զարգացման ծրագրերի իրականացման վրա:

Հ.Ծ.

## Տիգրանակերտցիների բարբառի բառարան

Երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունքում Նյու Ջերսիում լույս է ընծայվել տիգրանակերտցիների տեղական բարբառի բառարանը «Ի՞նչ կուսիս» խորագրով, որը նշանակում է «Ինչ ես ասում»: Հեղինակն է «Արմինյն Ուիքլի» շաբաթաթերթի երկարամյա սյունակագիր Չարլզ Գասպարյանը, ով Տիգրանակերտում ապրող հայերի յուրահատուկ գունավորում ունեցող բառերն ու արտահայտությունները հավաքել է եւ անգլերեն գրադարձությամբ ներկայացրել բառարանում:

Ըստ այդ առթիվ ստացված հաղորդագրության, բառարանի լույս ընծայման դրդապատճառը եղել է այն, որ գնալով ավելի քիչ վերապրողներ են մնում եւ հետեւաբար տիգրանակերտցիների «համով ու հումորով հագեցած» բարբառը անհետանալու եզրին է: «Ես ցանկացա սերունդներին հանձնել այն, ինչը իմ մայրենի լեզուն է: Հիշում եմ, երբ մանուկ հասակում ոչ տիգրանակերտցիների հետ էի շփվում այդ լեզվով, ծիծաղում էին ինձ վրա: Բայց հետո հասկացա, թե ինչ մեծ նշանակություն ունի պահպանել այն եւ փոխանցել սերունդներին», նշում է Գասպարյանը, ավելացնելով, որ լեզվաբաններ շատ անգամներ են դիմել նրան ճշտելու այս կամ այն բառը եւ խորհուրդ տվել անպայման հրատարակել բառարանը:

Բառարանում տեղ են գտել բազմաթիվ գունազարդ արտահայտություններ, ինչպես, օրինակ, «խեր էղնա» (առողջության իմաստով, երբ որեւէ մեկը փռշտում է), «գնա քնի» (դուրս արի իմաստով) կամ «Ձիվիտ կոտրե, տուն նստի» (հերիք է թրեւ գաս իմաստով) բառակազմությունները:

Գասպարյանը Յունիոն Սիթիում (Նյու Ջերսի) է մեծացել «մեծ ճգնաժամի» տարիներին: Տարբեր առիթներով հավաքների ժամանակ ներկայացրել է Տիգրանակերտի բարբառով փոքրիկ կոմիկական պիեսներ:

Առավել հասանելի դարձնելու համար նա բառարանը զետեղել է օն-լայն «http://www.armeniapedia.org/wiki/Dikranagerdtsi Vernacular Handbook in English Transliteration» հասցեով:

Հ. Ծ.

# Մարզական

# «Արարատն» ու «Գանձասարը» սկսել են մարզումները

## *6 ֆուտբոլիստներ համալրեցին «Ալաշկերտը»*




Գարնանը վերսկսվող Հայաստանի ֆուտբոլի առաջնության հանդիպումների նախապատրաստությունը մասնակից թիմերից առաջիններից մեկը սկսեց մրցաշարի առաջատար Երեւանի «Արարատը»: Եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով արարատցիները Ջրաղբյուրի իրենց մարզաբազայի փոխարեն երեկ առաջին մարզումն անցկացրին «Կիլիկիա» մարզադահլիճում: Այստեղ պարապմունքները կշարունակվեն մինչեւ դեկտեմբերի 30-ը, ապա ֆուտբոլիստներին մեկ շաբաթ հանգիստ կտրամադրվի:

Հունվարի սկզբին «Արարատը» մարզումները կշարունակի Ծաղկաձորում, որտեղ հիմնական շեշտը կդրվի ֆուտբոլիստների ֆիզիկական տվյալների բարելավման վրա: Իսկ ահա արտերկրում կազմակերպվելիք 2 հավաքների ընթացքում արդեն հիմնական ուշադրությունը դարձվելու է ֆուտբոլիստների խաղային որակներին, տեխնիկատակտիկական հմտությունների բարելավմանը: Առաջին հավաքը նախատեսվում է անցկացնել Չեռնոգորիայում, 2-րդը՝ Արաբական Միացյալ Էմիրություններում: Այդ հավաքների ժամանակ «Արարատում» փորձաշրջան կանցնեն հիմնականում սերբ ֆուտբոլիստներ, որոնցից լավագույնները կընդգրկվեն թիմում:

Արդեն այժմ «Արարատում» որոշակի փոփոխություններ են կատարվել: Թիմից հեռացել են Հովհաննես Գրիգորյանը, Արսեն Պետրոսյանը, Անդրանիկ Սարգսյանը եւ Գեւորգ Օհանյանը: Մեծ ֆուտբոլին հրաժեշտ է տվել Տիգրան Ղարաբաղցյանը, որը հավանաբար աշխատանքի կանցնի «Արարատ» ակումբում: Թիմի հետ մինչեւ առաջնության ավարտը պայմանագիր է կնքել «Ուլիսի» ավագ Արտակ Անդրիկյանը: Մոտ օրերս «Արարատի» կազմը կհամալրեն եւս 3 տեղացի ֆուտբոլիստներ:

Առաջնության 2-րդ կեսի նախապատրաստությունն է սկսել նաեւ Կապանի «Գանձասարը»: Մարզումներն անցկացվում են Կապանում: Առայժմ դրանց չեն մասնակցում Շոթա Ջիքիան, Գորան Օբրադովիչը, Դեյան Վուկոմանովիչը եւ դարպասապահ Արսեն Բեգլարյանը, որոնք թիմին կմիանան հունվարի սկզբին:

Հիշեցնենք, որ «Գանձասարից» հեռացել են Արթուր Բարսեղյանն ու Արտաս Առաքելյանը: Արթուրն արդեն պայմանագիր է կնքել «Ալաշկերտի» հետ, իսկ Արտասը ցանկանում է հանդես գալ արտերկրում: «Ալաշկերտի» շարքերը համալրել են նաեւ նախկին արարատցիներ Հովհաննես Գրիգորյանը, Գեւորգ Օհանյանը, Աղվան Հայրապետյանը, «Միկայի» նախկին ֆուտբոլիստ Հայկ Իշխանյանը եւ «Բանանցից» հեռացած Նարեկ Դավթյանը:

# Ռիվալդոն վերադառնում է մեծ ֆուտբոլ

1999-ի «Ոսկե գնդակի» դափնեկիր, ֆուտբոլի աշխարհի չեմպիոն, բրազիլացի հանրահայտ ֆուտբոլիստ Ռիվալդոն պայմանագիր է կնքել երկրի 3-րդ խմբի առաջնության մասնակից «Մոժի-Միրին» թիմի հետ: Դա նշանակում է, որ 41-ամյա Ռիվալդոն կարող է կրկին խաղադաշտ դուրս գալ մինչեւ 2015-ի նոյեմբեր, երբ կավարտվի ակումբի հետ պայմանագրի ժամկետը: Սակայն նրա հիմնական խնդիրը սաներին ֆուտբոլային գաղտնիքներին ծանոթացնելն է: Չէ՞ որ Ռիվալդոն նաեւ մարզելու է այդ թիմը:

Հետաքրքրական է, որ ակումբի երիտասարդական թիմում հանդես է գալիս Ռիվալդոյի որդին՝ Ռիվալդինյոն, որի հետ հայրը երազում է միասին խաղադաշտ դուրս գալ:

Ռիվալդոն առանց թիմի էր մնացել նոյեմբերից, երբ խզել էր պայմանագիրը բրազիլական 2-րդ խմբի առաջնության մասնակից «Սան Կաետանոյի» հետ: Այդ թիմի կազմում Ռիվալդոն 7 խաղ էր անցկացրել:

Հարկ է նշել, որ անվանի ֆուտբոլիստը 1992/93-ին եւ 2011-ին արդեն հանդես է եկել «Մոժի-Միրինում»: Իր հարուստ ֆուտբոլային կարիերայի ընթացքում Ռիվալդոն խաղացել է նաեւ բրազիլական «Սանտա Կրուզ», «Կորինթիանս», «Պալմեյրաս», «Կրուզեյրո» եւ «Սան Պաուլու» ակումբներում, իսպանական «Դեպորտիվոյում» եւ «Բարսելոնում», իտալական «Միլանում», հունական «Օլիմպիակոսում» եւ ԱԵԿ-ում, ուզբեկական «Բունեդկորում» եւ նույնիսկ Անգոլայի «Կաբուսկորպում»:




2008-ին Ռիվալդոն դարձավ «Մոժի-Միրինի» նախագահ: 2010-ին նա ի պատիվ հորը անվանափոխեց թիմի մարզադաշտը՝ «Ռոմիլդաո»: Մինչ այդ մարզադաշտը կրում էր Հռոմի Հովհաննես Պողոս 2-րդ պապի անունը:

# Խոսեպ Գվարդիոլան ամենաբարձր վարձատրվող մարզիչն է

Ըստ 101greatgoals.com-ի, Մյունխենի «Բավարիայի» գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան աշխարհի ամենաբարձր վարձատրվող մարզիչն է: Նրա տարեկան աշխատավարձը 17 մլն եվրո է: 2-րդ տեղում «Չելսիի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն է՝ 10, 03 մլն եվրո: Եռյակը եզրափակում է իտալացի Մարչելո Լիպին, որը գլխավորում է չինական «Գուանչժոու Էվերգրանդ» թիմը (10 մլն եվրո):

Ամենաբարձր վարձատրվող մարզիչների տասնյակում են նաեւ Արսեն Վենգերը («Արսենալ»)՝ 8,2 մլն, Ֆաբիո Կապելոն (ՌԴ հավաքական)՝ 7,8, Կառլո Անչելոտին («Ռեալ»)՝ 7,5, Դեւիդ Մոյեսը («Մանչեսթր Յունայթեդ»)՝ 5,9, Հերարդո Մարտինոն («Բարսելոնա»)՝ 5,4, Յուրգեն Կլոպը («Բորուսիա»)՝ 4,3 եւ Մանուել Պելեգրինին («Մանչեսթր Սիթի»)՝ 4,165:

## ՖՈՒՏԲՈԼ

# Բերեզովսկին հավանաբար կտեղափոխվի «Ուրալ»

**«Սպորտ Էքսպրեսի» տեղեկացմամբ, Ռոման Բերեզովսկին հնարավոր է, որ կարիերան շարունակի Եկատերինբուրգի «Ուրալում», որտեղ հանդես են գալիս ՀՀ հավաքականի ֆուտբոլիստներ Էդգար Մանուչարյանն ու Արթուր Սարկիսովը: «Դինամոն» եւ «Ուրալը» նախնական համաձայնության են եկել Բերեզովսկու հարցում: Փորձառու դարպասապահը վաղուց արդեն «Դինամոյի» հիմնական կազմում չի ընդգրկվում:**

# Միհրան Մանասյանը մարզվում է «Նժմեհում»

**Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնության ռմբարկուներից մեկը՝ «Ալաշկերտի» հարձակվող Միհրան Մանասյանը փորձաշրջան է անցնում Լիբանանի «Նժմեհում»: Նրան Լիբանան են հրավիրել Արմեն Սանամյանի առաջարկով, որը ներկայումս Բեյրութում է եւ բանակցում է «Նժմեհի» հետ, որպեսզի զբաղեցնի թիմի գլխավոր մարզչի պաշտոնը:**

**Առայժմ փորձաշրջանը Մանասյանի համար հաջող է անցնում: «Նժմեհը» հրավիրել էր ԱՄՆ-ից սեւամորթ մի հարձակվողի՝ Մուստաֆա Բազիին, սակայն մի քանի մարզումներից ու ստուգողական հանդիպումից հետո նրա ծառայություններից թիմը հրաժարվեց: Իսկ Մանասյանն իրեն հիանալի է դրսեւորել ստուգողական խաղում՝ դառնալով հեթ տրիկի հեղինակ: Այնպես որ հավանականությունը մեծ է, որ Միհրանը կընդգրկվի «Նժմեհում»:**

# 11 հայ շախմատիստներ առաջատարների թվում են

**Արաբական Միացյալ Էմիրություններում ընթացող շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունում հայ շախմատիստներից 11-ը՝ Անի Հարությունյանը, Կարեն Գրիգորյանը, Հովհաննես Գաբուզյանը, Տիգրան Հարությունյանը, Հրանտ Ալեքսանյանը, Մամիկոն Ղարիբյանը, Հակոբ Հակոբյանը, Գոռ Մելքոնյանը, Ռոբերտ Մուրադյանը, Արամ Հակոբյանը, Շանթ Սարգսյանը 2-րդ անընդմեջ հաղթանակները տոնեցին: Նրանք տարիքային իրենց խմբերում աղյուսակը գլխավորող շախմատիստների թվում են:**

# Մխիթարյանն առաջին պարտությունը կրեց



**Բրազիլիայի շախմատի առաջնության հերթական 2 տուրերն անհաջող դասավորվեցին մրցաշարի միանձնյա առաջատար Գրիգոր-Սեւակ Մխիթարյանի համար: 8-րդ տուրում նրա հաղթարշավը կանգնեցրեց Բրունո Մոլինան՝ հաշտություն կնքելով, իսկ 9-րդ տուրում Մխիթարյանն առաջին պարտությունը կրեց Սանտյագո դե Մոուրայի հետ մրցավեճում: Մխիթարյանը 7 միավորով նահանջեց 2-րդ հորիզոնական: Իսկ աղյուսակը 8 միավորով գլխավորեց Ռաֆայել Լեյթաոն, որը հաղթեց Սանտյագո դե Մոուրային եւ Մաքսիմո Մաչեդոյին: Մրցաշարի ավարտին մնացել է 2 տուր:**

# Հայաստանը կներկայացնեն 3 շախմատիստներ

**Այսօր հոլանդական Գրոնինգեն քաղաքում մեկնարկում է արդեն ավանդական դարձած շախմատի 51-րդ փառատոնը: A կարգի մրցաշարի 104 մասնակիցների թվում են հայաստանցի 3 շախմատիստներ՝ Զավեն Անդրեասյանը, Էլինա Դանիելյանը եւ Տիգրան Սիմոնյանը: Անդրեասյանը իր վարկանիշով (2610) մասնակիցների մեջ զիջում է միայն Մաքսիմ Ռոդշտայնին (2683), Եվգենի Ռոմանովին (2654) եւ Էրվին Լ՛Ամիին (2645):**

# «Սպարտակը» հավաք կանցկացնի Երեւանում

**Մոսկվայի «Սպարտակը» նախատեսում է մարտին ուսումնամարզական հավաք անցկացնել Ավանի ակադեմիայում: Այս փաստը հաստատել է նաեւ ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը: Հենց Երեւանից էլ «Սպարտակը» կուղեւորվի Գրոզնի, որտեղ կանցկացնի ՌԴ առաջնության 20-րդ տուրի հանդիպումը:**

**Ամռանը «Սպարտակը» կրկին կհանգրվանի ֆուտբոլի ակադեմիայում: Այդ ժամանակ կկազմակերպվի ֆուտբոլային մրցաշար: Առայժմ հայտնի են այդ մրցաշարի միայն երկու մասնակիցներ՝ «Սպարտակն» ու «Արարատը»:**

# Հանդիպում նվիրված Մանդելայի հիշատակին

**2014-ի մարտի 5-ին Յոհանեսբուրգում, որտեղ 2010-ին տեղի է ունեցել ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակիչ հանդիպումը, ընկերական մրցախաղ կանցկացնեն Բրազիլիայի եւ Հարավաֆրիկյան Հանրապետության հավաքականները: Այն կնվիրվի դեկտեմբերի 5-ին մահացած ՀԱՀ առաջին սեւամորթ նախագահ Նելսոն Մանդելայի հիշատակին: Նա երկիրը ղեկավարել է 1994-1999-ին: Իր կյանքի 27 տարիները Մանդելան անցկացրել է բանտում: 1993-ին նա արժանացել է Նոբելյան մրցանակի:**

*էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Գազային համաձայնագրերը՝ բուռն քննարկումների առարկա

*1-ին էջից*

Իսկ ահա հայոց խորհրդարանի ոչ իշխանական ուժերը ամենասարսափելի բնորոշումները տվեցին այս եւ մյուս երկու գազային համաձայնագրերին՝ գազի գործարքն անվանելով ազգային դավաճանություն, պետական ինքնիշխանության վաճառք, երկրի անվտանգությանն ուղղված վտանգ, էներգետիկ կախվածություն այլ պետությունից՝ պահանջելով հետ տանել բաժնեմասի վաճառքի համաձայնագիրը, կամ գոնե նրա դրույթների որոշ վտանգներ վերացնել: «Հայռուսգազարդի» քսան տոկոս բաժնեմասի՝ ռուսական «Գազպրոմին» վաճառքի համաձայնագրի քննարկումներն այնպես էին թեժացել, որ անգամ պասը վերցրեց ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը** եւ մի թունդ, կապի-չափի բերելու ելույթ ուղղեց ընդդիմությանը, թե հո սուրբ չե՞ք, կամ Աստծու կողմից տրված շնորհ չունե՞ք, լեզուն ոսկոր չունի, հա, բայց Աստված մարդուն ուղեղ է տվել, որ լեզուն կառավարի ու անհեթեթություններ ասել թույլ չտա. «Այ աղերսող որակ, ի՞նչ ես անում, քսան կիլո կարող ես բարձրացնել, հարյուր կիլոյի ես մոտենում», ասաց՝ չգիտենք հատկապես ո՞ր ընդդիմադիր բանախոսին նկատի ունենալով եւ համաձայնագրի մասին ասելով, որ բաժնեմաս վաճառելու խնդիր է միայն: Նա ընդդիմադիր պատգամավորներից ոմանց ելույթները հոգեբուժարանի խնդիր անվանեց.«Եթե ձեր խելքին ընկնենք՝ նոր որակ առաջանա, դո՞ւք եք պատասխան տալու՝ մեր էներգետիկ հզորացման աղբյուրն է անվտանգ դառնում», ասաց նա՝ բանը հասցնելով «ծիվաղային արտաքինով դոշ ծեծելու» որակումների եւ կոչ անելով ընդդիմությանը չափը ճանաչել:

Իսկ մինչ այդ մի շարք ուշագրավ հրադարձություններ էին եղել ու ոչ իշխանական խմբակցություններից սովորաբար ելույթներ հնչեցնող պատգամավորների կողքին թարմ հնչումներ էլ էին եղել. օրինակ՝ ԲՀԿ-ից Վարդան Օսկանյանը Ա. Մովսիսյանին հարց ուղղելիս ասաց.«Մենք տարիներով միասին աշխատել ենք նախարարներ, բարդ իրավիճակներում, այո, եղել ենք, բայց չենք դավաճանել ու ստել, եւ ուզում եմ հավատալ, որ հիմա նույնպես դա չի արվում», նկատեց նա՝ հարցնելով կուտակված պարտքի, գազի գնի չբարձրանալու մասին էներգետիկայի նախարարի նախկինում արված հավաստիացումների մասին:

Նրա կուսակից, ԲՀԿ խմբակցության քարտուղար **Նաիրա Զոհրաբյանը** եւս ասաց, թե տեղի է ունեցել հանցավոր գործարք ՀՀ թիկունքում (ՀՀ-ն պետությո՞ւն է , թե «սխոդկա», հարցրեց), գազի դիմաց պարտքը չի ձեւակերպվել ու բերվել ԱԺ, քանի որ մի քանի համապետական ընտրություններ կային, դրանք պետք է անցնեին, նոր բերվեր գույժը ԱԺ: Եւ հայտնեց, թե՝ իր կուսակցությունը չի մասնակցի հանցավոր պայմանագրի վավերացմանը: Նաիրա Զոհրաբյանը վստահ էր, որ կառավարությունը չի մասնակցել համաձայնագրի տեքստին, վասալային տեքստը ներկայացրել է ռուսական «Գազպրոմը», որին համաձայնել է Հայաստանի նախագահը:

ՀՅԴ տեսակետը ներկայացնող **Արծվիկ Մինասյանի** կարծիքով պայմանագիրը տնտեսության անվտանգությունն ու զարգացումը չի ապահովում, ողջամիտ բացատրություն չկա, թե մինչեւ 2043 թվականը ինչու է բացառիկ արտոնություն տրվում ռուսական «Գազպրոմին», իսկ Հայաստանին կախվածության մեջ է գցում «Գազպրոմի» էներգետիկ շահերից. «Նվեր տայինք՝ էսպիսի պարտավորություններ էլ չստանձնեինք: Անհամաչափ պարտավորություններ եք ստանձնել», ասաց նա՝ առաջարկելով մինչեւ քվեարկությունը բանակցել Հայաստանի նախագահի հետ եւ չեզոքացնել գոնե համաձայնագրի վտանգները:

«Ժառանգությունից» **Զարուհի Փոստանջյանի** ելույթը որակումների առումով միշտ բոլորից թունդն է լինում, եւ այս անգամ էլ բացառություն չէր, միանգամից առաջարկն ասենք՝ դա համաձայնագիրը հետ տանելուն էր վերաբերում, հետն էլ մի փրկության կոմիտե էր առաջարկում ստեղծել, քանի որ Հայաստանն անտեր է մնացել:

ՀԱԿ-ից **Լեւոն Զուրաբյանը** քննադատության չդիմացող անվանեց համաձայնագիրը, անօրինական եւ դավաճանական գործարք՝ թաքցված գազի գնի թանկացում, երկու տարի շարունակվող գաղտնի բանակցություններ, մինչդեռ գազի գինը հինգ անգամ այդ ընթացքում թանկացել է՝ գաղտնաբար պետական պարտք կուտակելով: Ըստ նրա եւս՝ նպատակն է եղել ընտրական ցիկլերում սոցիալական դժգոհությունները հետաձգել: Իսկ համաձայնագրի վավերացման դեպքում կորցնում ենք այլընտրանքը՝ Իրանից կամ ուրիշ երկրից գազ գնելու հնարավորությունը:

Նկատի առնենք, որ բաժնեմասի վաճառքի համաձայնագրի առումով մտահոգություններ ուներ նաեւ մեծամասնությունից **Դավիթ Հարությունյանը**, ու արժե, որ նրա դիտարկումների հետ մեծամասնությունը հաշվի նստի:

Այս եւ երկու այլ համաձայնագրերի նյարդային քննարկումը երկար տեւեց, երեկոյան ուշ ժամի դեռ շարունակվում էր, քվեարկությունն էլ մնաց երկուշաբթի, ափսոսում ենք, որ չկարողացանք շատ մանրամասներ փոխանցել:

Վերջում ավելացնենք, որ քննարկումների ժամանակ Ազգային ժողովի դարպասների մոտ այս համաձայնագրերի դեմ բողոքի ցույց էր անում ակտիվիստների մի մեծ խումբ, որն այնքան էլ անամպ չանցավ, քանի որ եղան բերման ենթարկվածներ, որոնց հետո ազատ արձակեցին:

Եվ մի նկատառում էլ՝ այս հապշտապ արտահերթ նիստերը ոչ մի առումով շահեկան չեն, քանի որ բազմաթիվ կարեւոր նախագծեր են լցվում իրար գլխի, մինչդեռ երկրի ճակատագրի վերաբերյալ նախագծերին ուշադիր ու քննական հայացք է պետք հանգիստ պայմաններում:

# Ցանցահենները կորզել են 40 մլն ամերիկացի քարտատերերի տվյալները

ԱՄՆ-ում, ինչպես նաեւ Կանադայում ցանցահենները կորզել են բանկային քարտերի 40 մլն սեփականատերերի անձնական տվյալները: Նրանք կոտրել են Ամերիկայի խոշորագույն մանրածախ ընկերություններից մեկի համակարգչային համակարգը եւ մոտ մեկուկես շաբաթ տեղեկություններ կորզել այնտեղից, հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:

ԱՄՆ-ում եւ Կանադայում գրեթե 2 հազար հանրախանութ ունեցող Target ընկերության խորհրդանիշը թիրախն է: Ճակատագրի հեգնանքով ընկերության հաճախորդները դարձել են ցանցահենների թիրախներ: Գնորդների վարկային քարտերը եւ նրանց անձնական տվյալները ներկայումս պահվում են անհայտ ցանցահենների կոշտ սկավառակների վրա:

Տուժած հաճախորդներից մեկը պատմում է, որ ինքը խանութ էր գնում շաբաթական 3-4 անգամ եւ մշտապես վճարում էր քարտով: Այսուհետեւ հավանաբար ստիպված կլինի անցնել կանխիկ վճարումների:

Չարագործներն իրենց գրոհի համար ընտրել էին շատ հարմար պահ՝ նոյեմբերի 26-ից մինչեւ դեկտեմբերի 15-ը, երբ ամերիկացիները զանգվածաբար գնումներ են կատարում: Մանավանդ ուրբաթ օրերին հաճախորդները շատ են զեղչերի պատճառով:

ԱՄՆ-ի գաղտնի ծառայությունը եւ ՀԴԲ-ն արդեն զբաղվում են գործի քննությամբ: Մասնակցում են նաեւ Visa եւ Master Card խոշորագույն վճարային համակարգերը: Առայժմ հայտնի չէ կասկածյալների շրջանակը: Դատելով ըստ ամենայնի, նման վիթխարիածավալ ֆինանսական տվյալների տիրացած կիբեռհանցագործները թաքնվել են: Անվտանգության փորձագետ Լի Վեյների կարծիքով, ցանցահենները կարող են որոշ ժամանակ լռել, իսկ հետո «տվյալները վաճառել ուրիշ մարդկանց, որոնք կօգտվեն դրանցից»






# Իլհամ Ալիեւը «կոնֆեդերատիվ պետությո՞ւն է ստեղծում»

**Haqqin.az-ի փոխանցմամբ, երեկ օրվա վերջին հայտնի է դարձել, որ Իլհամ Ալիեւը «հրամանագիր է ստորագրել Նախիջեւանի առանձին համազորային բանակ կազմավորելու մասին»: Ըստ այդմ, Նախիջեւանի համազորային բանակը դուրս է բերվել Ադրբեջանի ՊՆ ենթակայությունից: Նշված զորամիավորումն այսուհետեւ ուղղակիորեն կենթարկվի Իլհամ Ալիեւին, իսկ օպերատիվ կառավարման հարցերում՝ Նախիջեւանի ինքնավարության ղեկավար Վասիբ Թալիբովին:**

**Ադրբեջանցի փորձագետների կարծիքով, «որեւէ նորություն այստեղ չկա, նախագահն ընդամենը փաստացի իրավիճակն օրինականացրել է»: Նրանք մասնանշում են, որ մինչ այդ էլ Նախիջեւանում տեղակայված համազորային բանակը չէր ենթարկվում պաշտպանության նախարարությանը: Հայտնի է նաեւ, որ ինքնավարության տարածքից նորակոչիկները պարտադիր ծառայության զորակոչվում են միայն Նախիջեւանում տեղակայված զորամասեր:**

**Որոշ փորձագետներ, սակայն, Իլհամ Ալիեւի հրամանագիրը կապում են ԼՂ բանակցային գործընթացի հետ եւ ենթադրում, որ «եթե առաջընթաց արձանագրվի, Ադրբեջանը կարող է համաձայնել պետության կոնֆեդերատիվ կառուցվածքում Լեռնային Ղարաբաղի հատուկ կարգավիճակին՝ ներառյալ սեփական բանակ ունենալու՝ ղարաբաղյան կողմի իրավունքը եւ այս իմաստով Նախիջեւանի ինքնուրույն բանակ կազմավորելու մասին հրամանագիրը կարելի է դիտարկել որպես հայերին ուղղված ազդակ»:**

**«Թուրան» գործակալության տնօրեն, վերլուծաբան Մեհման Ալիեւը, սակայն, այդ կարծիքը չի կիսում եւ համարում է, որ Իլհամ Ալիեւը «պարզապես ընդառաջել է որոշ զինվորականների հավակնություններին եւ փորձում է տպավորություն ստեղծել, թե Ադրբեջանում կազմավորվում է երկրորդ հզոր բանակը, մինչդեռ իրականում ոչինչ չի փոխվի»:**

**Ամենահետաքրքրականն այն է, որ Իլհամ Ալիեւի հրամանագիրը մեկնաբանել է նաեւ Ադրբեջանի խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության հարցերով կոմիտեի նախագահ Զահիդ Օրուջը: Նա որոշ դիտարկումներ է արել Նախիջեւանին «սպառնացող վտանգների», Թուրքիայի կողմից ինքնավարության «անվտանգության երաշխավորի դերի» մասին, ապա ձեւակերպել. «Նախիջեւանի կարգավիճակի բարձրացումը Հայաստանի հետ բանակցություններում կամրապնդի Ադրբեջանի դիրքերը եւ որաշակիորեն կարող է մոդելային լինել Լեռնային Ղարաբաղի «ինքնավարության» (չակերտները մերն են- Վ. Ա.) համար»:**

**Միլլի մեջլիսի կոմիտեի նախագահն, ըստ էության, հաստատել է որոշ փորձագետների այն դիտարկումը, որ Նախիջեւանի ինքնուրույն բանակ կազմավորելու մասին Իլհամ Ալիեւի հրամանագիրը կարող է նշանակել, որ Ադրբեջանը նախապատրաստվում է պետության կոնֆեդերատիվ կառուցվածքի անցնել, եթե «հայ-ադրբեջանական բանակցություններում առաջընթաց արձանագրվի»:**

**Այնուամենայնիվ, բացառված չէ, որ Նախիջեւանում իր ուղղակի ենթակայության բանակ ստեղծելու գաղափարն Իլհամ Ալիեւի «պայծառ» ուղեղում ծագած լինի զուտ ներքաղաքական նկատառումներով: Վաղուց է խոսվում, որ Նախիջեւանում անջատողական տրամադրություններ կան իշխանության վերնախավում: Եւ Նախիջեւանում փաստացի նախագահական գվարդիա կազմավորելով՝ Իլհամ Ալիեւը, թերեւս, նպատակ ունի զսպելու այդ տրամադրությունները, իսկ հարկ եղած դեպքում՝ այն օգտագործելու նաեւ Բաքվում, ինչպես որ ժամանակին Հեյդար Ալիեւին պաշտպանել են նախիջեւանցի «կամավորականները»՝ իշխանության համար նրա պայքարում:**

**Բուն նպատակն, ամենայն հավանականությամբ, դա է, իսկ այն ծածկաքողարկելու նպատակով ադրբեջանցի անուղեղ «քաղտեխնոլոգներն» ասպարեզ են հանել «կոնֆեդերատիվ պետության» թեման՝ երեւի հուսալով, որ հայկական կողմն «ըստ արժանվույն կգնահատի Իլհամ Ալիեւի մեծահոգությունը»:**

**Դա արդեն ծիծաղելի է: ԼՂՀ-ն արդեն 22 տարի է՝ անկախ պետություն է եւ ունի բանակ, որն իրեն պատերազմի դաշտում պսակել է փառքով: Իսկ թե ո՞ւմ կամ ինչի՞ գերագույն գլխավոր հրամանատար է Իլհամ Ալիեւը՝ դա արդեն իր խնդիրն է:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 20.12.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: